
**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ
ՏԱՐԲԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ**

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Թ. Լ.

Հնագույն մարդը մեծ հեռավորությունից դիտում էր երկնային լուսատուներին, փորձում հասկանալ դրանց շարժումներն ու իմաստավորել ժամանակը: Դիտողական փաստերի կուտակման շնորհիվ նրա ուշադրությունը սևեռվում էր պարբերաբար կրկնվող երևույթների վրա: Բնության մեջ ակնառու այդպիսի երևույթներից է ցերեկվա և գիշերվա հաջորդականությունը, ինչից էլ կազմվում է օրը՝ բաժանվելով ժամերի, րոպեների և վայրկյանների: Համեմատաբար մեծ ժամանակամիջոցներ չափելու համար միավոր է ընդունվում Լուսնի չորս փուլերի կրկնման պարբերությունը՝ ամիսը: Իսկ էլ ավելի մեծ ժամանակամիջոցների համար օգտագործվում է տարվա չորս եղանակների տևողությունը՝ արևադարձային տարին: Մշակույթի պատմության մեջ ժամանակի չափման տարբեր համակարգերն անցել են կատարելագործման տևական ճանապարհ: Որոնումների ընթացքն արտահայտվել է նաև հայ ժողովրդական հեքիաթներում, ուր, բնականաբար, ժամանակը չէր կարող հաշվվել վայրկյանի հարյուրերորդ մասի ճշտությամբ, այլ առասպելական մտածողության տարածաժամանակային այնպիսի ցուցիչներով, ինչպիսիք են աչքը թարթելը, թուքը չորանալը, ձիու, Զմռութ դուշի կամ արծվի միջոցով լուս ու մութ աշխարհի «սայմանը» կամ «սնոռը» (սահման) կտրելը¹ («Գորտ» - Չարսանձագ, «Անմահական խնձոր» - Այրարատ, «Ավջի – օղի» - Այրարատ), տիեզերքի՝ «մի կալի, մծիկի կամ մրջմնի չափ երևալը»² («Մըմավոն թագավոր ու Գյուլ» - Այրարատ, «Ավջի – օղի» - Այրարատ), «մեկ ամսվա», «տասվերկու սահաթվա» կամ «քառսուն աուր ճանապարհը մի սահաթում անցնելը»³ («Մաջրում խոջի հեքիաթը» - Շիրակ, «Ամպ» - Չարսանձագ, «Բըլել աղջիկ» - Չարսանձագ):

«Առջի տղի նաղը»⁴ (Այրարատ) հեքիաթում փոխադրամիջոց է ձձումը, իսկ «Զարգանդ թագավորի աղջիկը»⁵ (Շիրակ) հեքիաթում պառավն իբրև փոխադրամիջոց առաջարկում է իր «շալն ու յայլուղը», բայց ձին լեզու է առնում և ասում. «Չէ

¹ Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ), հ. II, Ե., 1959, էջ 31-32, 542, Էմինեան ազգագրական ժողովածու (այսուհետև՝ ԷԱԺ), հ. Բ, Մոսկուա - Վաղարշապատ, 1901, էջ 206:

² ՀԺՀ, հ. III, Ե., 1962, էջ 90, հ. II, էջ 541:

³ Նույն տեղում, հ. IV, Ե., 1963, էջ 109, ԷԱԺ, հ. Բ, էջ 175-183:

⁴ Նույն տեղում, հ. I, Ե., 1959, էջ 154:

⁵ Նույն տեղում, հ. IV, էջ 94-104:

մերս, դու ու խանումս նստեք շալին, Ասլան աղես էլ իմ թամբին, աստված ընձի էլ թոնելու թևեր տվեց, կթոնիմ,- էս ըսավ ու թևերը բացեց»⁶:

Բանահյուսական նյութերում և մասնավորապես հայկական հրաշապատում հեքիաթներում տարածության և ժամանակի մեջ տեղեկատվությունը փոխանցվում է չախմախի ու չախմախաքարի⁷ շփումից առաջացած կրակի միջոցով: Բուսականության և աշխարհի հավերժությունը պայմանավորող չորս տարրերից մեկը՝ սրբազան կրակը, «Հոգու և Աստծո խորհրդանիշն է, խավարի ու մահվան դեմ լույսի ու կյանքի հաղթանակը»⁸: Հնուց անտի ուղեկցելով քաղաքակրթությանը՝ «կրակը ոչ միայն ջերմացրել է մարդուն, այլև հուսադրել ու սատարել է նրան»⁹:

Կրակի ծագման հիմքով ստեղծված գրեթե բոլոր հնագույն առասպելներում մարդը կրակը ստանում է կա՛մ կենդանիներից ու թռչուններից (տոհմային նախնիների տոտեմային ծագման վերապրուկ), կա՛մ էլ նրանց օգնությամբ¹⁰: Հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթներում այնկողմնային հրաշագործ օգնականները ծիսական փորձությունների փուլում հայտնված հերոսի մասին տեղեկատվություն են ստանում *կրակի*¹¹ միջոցով: Կայծքարի կրակը, որ ստացվում է «շփելու միջոցով», «համարվում է արևի փոխանյութ»¹²: Այն «արեգակի կախարդանքով» կենսական լիցքեր է հաղորդում կենդանու կամ թռչունի մազին՝ ամբողջացնելով նրա տիրոջը՝ իբրև մշակութային հերոսին սատարող կախարդական օգնական: «Երկնային կրակ» անունը, որ ժողովուրդը հաճախ օգտագործում է ամառային արևադարձի կրակի մասին խոսելիս, պարզ ցույց է տալիս երկնային և երկրային բոցի գիտակցված կապը»¹³: Հաղթահարելով ժամանակն ու տարածությունը՝ օգնականները կատարում են հեքիաթի հերոսին առաջադրված անիրագործելի թվացող հանձնարարություններ:

Կրակի միջոցով ժամանակի ու տարածության հաղթահարման հավատալիքի վերաբերյալ մեր տեսակետը հաստատվում է Հայաստանի տարբեր պատմաագ-

⁶ Նույն տեղում, էջ 102: Թռչող յայլուղի, ձուլմի, ձիու, հավքի միջոցով այս ու այն աշխարհ տեղափոխվելու հավատալիքը իր խորքում կրում է նաև տիեզերքը մարդուն ծառայեցնելու տարերային իրապաշտական ձգտումներ:

⁷ Չախմախաքարը (կայծքար) գալլախագի մեծ ընտանիքին պատկանող համեստ «մշակ» է, բյուրեղային մի հանքանյութ, որի օգնությամբ մեր նախնիները օջախում կրակ էին վառում, չիբուխ ծխում, կրակում էին առաջին պարզունակ հրացաններով:

⁸ *Энциклопедия. Символы, знаки, эмблемы (авт.-сост. д-р ист. наук, проф. В. Э. Багдасарян, И. Б. Орлов, В. Л. Телицын), М., 2003, с. 342.*

⁹ Նույն տեղում:

¹⁰ *Мифы народов мира, т. 2, М., 1982, с. 239-240.*

¹¹ Կրակի և չախմախի հետ աղերսվող նման մոտիվները տե՛ս *С. А. Гуллакян., Указатель мотивов армянских волшебных сказок, Е., 1983, с. 123-124, 177.*

¹² *Տրեգեր Ջ.*, Ոսկե ճյուղը (մոգության և կրոնի ուսումնասիրություն), Ե., 1989, էջ 755: Հատկանշական է, որ Ջատկի նախօրյակին՝ չարչարանաց ուրբաթ օրվան ուղեկցող կրակի տոներին, կաթոլիկ եկեղեցիներում բոլոր կրակները մարում են, հետո նորից վառում կայծքարով ու պողպատով (նույն տեղում, էջ 721):

¹³ Նույն տեղում, էջ 755:

զագրական շրջաններից գրառված հրաշապատում հեքիաթների հետևյալ մոտիվներով՝

1. Ձին (տարբերակներում՝ դուշ, դովտ, մրջյուն) օգնության է հասնում հերոսին՝ մազը (տարբերակներում՝ բմբուլ, բուրդ, եղունգ) չախմախին տալու միջոցով¹⁴:

2. Ուտքերից կրակ թափող թռչունը (տարբերակներում՝ ձին) ծիսական փորձությունների փուլում հայտնված հերոսին տեղափոխում է այս ու այնկողմյան աշխարհներ¹⁵:

3. «Թլիսիմը», «թլամի չիբուխը» (կախարդական հուռուրթ) չախմախին տալիս օգնության են հասնում կախարդական իրերը և սատարում հեքիաթի՝ դժվար կացության մեջ հայտնված հերոսին¹⁶:

Վ. Յա. Պրոպյի կարծիքով՝ հեքիաթներում և առասպելներում ընդունված կախարդական իրերից (օգնականներից) ամենահինը ձիու պոչից պոկված մազն է, ինչն էլ, համարժեք լինելով ողջ կենդանուն, կրակի սրբազան տարերքով ոչ միայն խթանում է հերոսի տեղաշարժը, այլև իրար է կապում այս ու այնկողմյան աշխարհները¹⁷:

«Դ ձ Վրիշին տղան» (Արցախ) հեքիաթում սև ձիու խորհրդով տղան «մին չըխմըխաքար, մին չախմախ» ձիու մազի հետ պահում է գրպանում. «Հըշտըղ վրեր նեղ տըղը ընգնիս, մազըս կըտինիս չըխմըխաքարեն յիր ձ ն, թափ տաս, էն ըմ քշտիտ հ ձ զիր»: Նույն մոտիվն առկա է «Ոսկե քաքուլ տղի հեքիաթը» (Այրարատ), «Միրգա Մահմուտի հեքիաթը» (Բասեն), «Մըմավոն թագավոր ու Գյուլ» (Այրարատ), «Քաչիկի հեքիաթը» (Բասեն) և այլ տարբերակներում: «Քյալ օղլան»¹⁸ (Բասեն) հեքիաթում համանուն հերոսը «դավռուշից» ստացած «չըբուղի»¹⁹ հմայական հատկության շնորհիվ հաղթահարում է բոլոր փորձությունները. «Քեզի կուտամ էսիկ, օր ինչքան նեղը գըլնիս իսա, էս չըբուղը զարկես ըսես. «Ես էսքան նեղութենի մեջ եմ, ընձի լենը հանե»²⁰: Չարսանճագի բարբառով գրառված «Ամպ» հեքիաթում տղան «լեցոց չուպուխը, չախմախը զարկեց, կրակը դրեց չուպուխին վրան, խմեց ու դըրժֆաւ (ուշաթափ քնիլ)»: Մեկ այլ՝ «Գորտ» (Չարսանճագ) հեքիաթում տղան «չպողը քաշեց, եաւանմիշ եղաւ (ընկողմանեցաւ)»²¹: Թե՛ քնելը, թե՛ նիհեելը,

¹⁴ ՀԺՀ, հ. VI, Ե., 1973, էջ 116-128, 122, հ. I, էջ 259-260, հ. IV, էջ 206-207, 249-250, հ. III, էջ 90:

¹⁵ Նույն տեղում, հ. III, էջ 50, 80-94, ԷԱԺ, հ. Բ, էջ 206, 226, 183-197, 198-216:

¹⁶ Նույն տեղում, հ. II, էջ 23-38, հ. IV, էջ 105-117, 205-207, 302-309, ԷԱԺ, հ. Բ, էջ 154, 169, 172, 196:

¹⁷ **Пропп В. Я.**, *Исторические корни волшебной сказки, Л., 1946, с. 174.*

¹⁸ ՀԺՀ, հ. VI, էջ 116-128, էջ 120, հ. I, էջ 259-260, հ. IV, էջ 206-207, հ. III, էջ 90, հ. IV, էջ 249-250, 302-309:

¹⁹ Հայ ժողովրդական հեքիաթներում չիբուխն ու չախմախը հմայական հատկություններով օժտված «թլիսիմներ» են («մեկ պգտի չիբուղըմ թլամի հանեց» - ՀԺՀ, հ. IV, էջ 111) և հաճախ նույնանուն են, որովհետև չախմախով են չիբուխը կրակ տալիս (ՀԺՀ, հ. IV, էջ 303-307, 205-207, ԷԱԺ, հ. Բ, էջ 196, 169, 172): Դեհի «կնիկն» իր «չպոխով խփում է մերմեր քարին», և ճեղքված քարը ներս է առնում հեքիաթի՝ փորձություններ հաղթահարող հերոսին: Նույն կերպ էլ հերոսին հանում է քարայրից (ԷԱԺ, հ. Բ, էջ 154):

²⁰ ՀԺՀ, հ. IV, էջ 303:

²¹ ԷԱԺ, հ. Բ., էջ 183-197, 195-196, 198-216, 213:

առասպելաբանական պատկերացումների համաձայն, նշանակում են ճանապարհորդություն դեպի անդրաշխարհ (Ժամանակավոր ծիսական մահ), ուր վերոհիշյալ հեքիաթների նվիրագործվողները հայտնվում են չախմախի հրմայական գործությամբ: «Ոսկե քաքուլ տղան» կրակ է տալիս դովտերի (ահեռի զագան, մարդկային բնության ուղտ) բուրդը, մրջյունների եղունգն ու դուշերի բմբուլը, և նրանք անմիջապես օգնության են գալիս երախտագետ հերոսին («Ոսկե քաքուլ տղի հեքիաթը» - Այրարատ)²²: «Դ *ս* վրիշին տղան» (Արցախ) հեքիաթում նույնպես «տղան չըխմախեն թափ ա տամ Մըն ծին, Առյուծը, Ձ *ս* մբ *ս* ր *ս* ր տ դուշը կյամ ըն կոշտը»: Տեղեկատվությունն իրականանում է հայոց ծիսամշակութային ավանդույթներով արմատավորված պատկերացումներով: Ժամանակն ու տարածությունը հաղթահարվում են՝ մի դեպքում օգնականների մազը կրակ տալով, մյուս դեպքում՝ չախմախաքարը՝ քերծի կամ մազը՝ կամրջի վերափոխելով: Օրինակ՝ «Զարգանդ թագավորի աղջիկը» (Շիրակ) հեքիաթում Ասլանը ձիու «իբեք մազը քցեց գյուլի վրա, կամուրջ դարձավ, իրանք անցան» կամ «չըխմախաքարը վրեր ա քըցում, *ս* ր *ս* ր *ս* ր ան դ *ս* ր *ս* ր *ս* ր ղաթը տըռնում ա քըրծ»²³:

Ակներն է, որ քննարկվող որոշ բնագրերում «չըբուղն» (=չախմախ) ընկալվում է իբրև ժամանակի ու տարածության հաղթահարման հմայական ցուցիչ, իսկ որոշ հեքիաթներում էլ չախմախը լայնորեն կիրառվում է տեղեկատվական դաշտում: «Անմահական խնձոր» (Այրարատ) հեքիաթում թագավորի աղջիկը տղային մի «թխիմ» (կախարդական իր, հուռուր) է նվիրում, ինչը չախմախին տալիս օգնության են հասնում կախարդական իրերը: Տեղեկատվություն է փոխանցվում նաև սև, սպիտակ, կարմիր ձիերի մազը կրակ տալիս. «Որ մազը կրակին տաս էն ձին էն սհաթը, իրա ամեն սարք ու կարգովը, կգա աղաքիդ կկաննի. երբ ուզենաս էլի կթողաս կերթա»: «Մաջրում խոջի հեքիաթում»²⁴ (Շիրակ) միաժամանակ խաղարկվում են չախմախի հմայական, տեղեկատվական և տարածաժամանակային ցուցիչները: Ձեռք բերելով «օխտը դատ բմբլե յորդան դոշկի մեջ քնող», բայց «ձիանոցի չոր տախտի վրա» ամուսնուն դավաճանող կնոջ «թլամի չիբուխը»՝ Սուլեյման աղեն կնոջը դարձնում է ձի, իսկ նրա արաբ սիրեկանին՝ էշ: Հեքիաթի հերոսի առջև խնդիր է դրված բացահայտելու՝ ձի դարձած անհավատարիմ կնոջը զարու փոխարեն չախմախ քարով կերակրելու «թխիմը»²⁵. «Էտ չախմախ քարը դով

²² ՀԺՀ, հ. I, էջ 259-260: Մասի միջոցով (մազ, եղունգ, ատամ, կաշի, եղջյուր և այլն) ամբողջին տիրանալու հավատալիքն առկա է ինչպես ընդհանուր, այնպես էլ հայկական բանահյուսության մեջ [*Լալայան Ե.*, Ծիսական կարգերը հայոց մեջ (*Ազգագրական հանդես*, Թիֆլիս, 1911, էջ 185-186), *Пропов В. Я.*, նշվ. աշխ., էջ 174]:

²³ Նույն տեղում, հ. VI, էջ 122, հ. I, էջ 259-260, հ. VI, էջ 122, հ. VI, էջ 118, հ. IV, էջ 101, հ. VI, էջ 118:

²⁴ Նույն տեղում, հ. II, էջ 23-38, 28 հ. IV, էջ 105-117:

²⁵ Չար ոգիներին աղերսվող հնավանդ հավատալիքների ու պատկերացումների համաձայն՝ սատանան ընդունակ է թափանցելու մարդու մարմինը, իշխել նրա վարքի ու մտքի վրա: Ենթադրվում էր, թե «թխիմի» դյուրություն մարդիկ ի վիճակի են կերպարանափոխվել տարբեր կենդանիների ու անշունչ առարկաների, կատարել չարագործություններ: Հետաքրքիր է, որ նույն հավատալիքի ուշ շրջանի տարբերակներում անդնդախոր ձորերում ու ավերակներում ապաստանող չար ոգիներին փոխարինում են օտար ու եկվոր տարրերը՝ արաբները, մարմնավորելով

դուրի ուտելու պատճառը իմացի ու արի՝ քեզի առնիմ»²⁶: Չախմախի կարծր, կայծահան հատկությամբ վերոհիշյալ «Մաջրում խոջի հեքիաթում» ընդգծվում է «չախմախ քարը հերսոտ ուտող» դավաճան մատակի՝ ամուսնուն պատճառած ցավի սաստկությունը, մյուս կողմից՝ «մեկ ամսվա ճամփեն մեկ օրում կտրող» կատաղած զամբիկի կրքի ուժգնությունը:

Հնագիտական հետազոտությունների արդյունքները վկայում են կայծքարին վերագրվող ծիսահմայական հատկությունների մասին. «Վանակատը հնում կայծքարի նման համարվել է կայծակի կամ փայլակի խորհրդանիշ և, ըստ այդմ էլ, որպես մութ ու չար ուժերից զերծ պահող, վնասաբեր ազդեցությունները վանող և չարխափան գորություն ունեցող հմայական ինքնատիպ պահպանակ՝ ցլեպների, կիսապատրաստուկների և արտեֆակտերի տեսքով զետեղվել է Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. III-I հազ. դամբարանային համալիրներում»²⁷: Մասնագետների կարծիքով, վանակատն ու կայծքարը համարվել են թաղման արարողության անկապտելի հատկանիշներ²⁸: Ամենայն հավանականությամբ, դրանք համադրվել են հանդերձյալ աշխարհում՝ հոգու գնալիք *ճանապարհը* լուսավորելու ծիսարարողական պատկերացումների հետ:

Տարածաժամանակային ցուցիչներն անդրաշխարհում, անշուշտ, գործում են հողեղենի և հրեղենի հստակ սահմանաբաժանման պայմաններում: Տրամագծորեն հակադիր երկու աշխարհների պայքարն ակնառու է AT 433 տիպին պատկանող հայկական հրաշապատում հեքիաթներում²⁹: «Հաբրմանի հեքիաթում» (Մանագկերտ) նույնանուն հերոսը հրեղեն է, իսկ նրա կինը՝ հողեղեն: Անդրաշխարհյան ցուցիչները այս աշխարհում գաղտնագրման կարիք ունեն: Նրանց անժամանակ բացահայտումը փորձաքար է դառնում հակադիր աշխարհի հերոսների համար: Գաղտնիքը (սրորը) պետք է խնամքով պահել, հակառակ դեպքում «թըլըսումը խարապ կեղնի» («Հաբրմանի»-Շիրակ): Այստեղ գործում է ծածկագրված մի բանաձև. 1) հողածնի երկրում ոչ հողածնի շապիկը (խրխին) կրակ տալիս (գաղտնիքի բացահայտում) հերոսն անհայտանում է, և հակառակը, 2) ոչ հողածնի երկրում շապիկը կրակ տալիս հերոսը հողածին է դառնում: Այս աշխարհում հայտնվելիս հերոսի անվտանգության միակ երաշխիքը գաղտնիքի պահպանումն է: Բանաձևի երկրորդ մասը որոշ հեքիաթներում այլ զարգացումներ է ունենում: «Մաջրում խոջի հեքիաթում» ոչ հողածնի երկրում «իսան օղին» իրավունք չունի ախ քաշելու,

ծանր բռնատիրությունը, ինչը քննարկվող հեքիաթում արտահայտվել է չար ուժին (արաբ) տրված կնոջ՝ ամուսնուն դավաճանելու արարքի միջոցով:

²⁶ ՀԺՀ, հ. IV, էջ 109:

²⁷ Փիլիպոսյան Ա., Հայկական լեռնաշխարհը Մերձավոր Արևելքի պատմա-մշակութային փոխառնչությունների ոլորտում (մ.թ.ա. III-I հազարամյակներ), դոկտ. առ., Ե., 2004, էջ 50:

²⁸ Симолян А., *Обсидиан и кремь как атрибуты погребального обряда* [Հայ ժողովրդա-կան մշակույթի հետազոտման հարցեր (ՀԺՄՀՀ), Ե., 1988, էջ 79-81]:

²⁹ Աարնե - Թումիսուն. Ժողովրդական հեքիաթների տիպերը (գործավարական թարգմանություն): Ձեռագիրը՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում: ՀԺՀ, հ. IV, էջ 15-26, 195-219, ՀԺՀ, հ. IX, Ե., 1968, էջ 244-252, ԷԱԺ, հ. Բ, էջ 198-216, *Մրվանձոյանց Գ.*, Երկեր, հ. 1, Ե., 1978, էջ 490-495, *Բիրակյն*, Կ. Պոլիս, 1899, N 3, էջ 42-45:

այսինքն՝ իր հողածին հայրենիքը հիշելու: Հենց այն քաշելն է յուրայիններին տեսնելու պատճառ դառնում, ուր և գաղտնիքը բացելով՝ հողածին Մաջրում խոջան մեկընդմիջտ զրկվում է սիրած կնոջն ու երեխաներին տեսնելու հնարավորությունից: Այնուամենայնիվ, անդրաշխարհից այսրաշխարհում հայտնվելիս հերոսի անվտանգության միակ երաշխիքը գաղտնիքի պահպանումն է, հակառակ դեպքում՝ «դու այնտեղ կմնաս վառվելեն, իմ աղջիկս էլ՝ այստեղ»³⁰, - ասում է ոչ հողածինների երկրի թագավորը՝ իր հրեղեն աղջկան Մաջրում խոջային կնության տալուց առաջ:

Չարսանճագի բարբառով գրառված «Գորտ» հեքիաթում, խախտելով պայմանը, թագավորի տղան կրակ է տալիս գորտ-հարսնացուի շապիկը: Աղջիկը աղավնի է դառնում, թոչում «փենճերէն դուրս»՝ փեսացուին պատվիրելով «եօթը երկթե չարոխ» կարել տալ, «երկթե տէյնէկ» բռնել և կոշիկները մաշելուց ու գավազանը ասեղի չափ դառնալուց հետո միայն «օտքդ կը մննայ իմ սայմանը»³¹: «Միրգա Մահմուտի հեքիաթում»³² (Բասեն) մութ աշխարհը խորհրդանշող երկաթե կամ պողպատե չարուխները, բիրը (գավազան), յոթ հինավուրց բերդերը, կորեկի հատիկները (տարբերակներում՝ նաև անտեսանելի դարձնող երկաթե գլխարկը կամ քյուլլահը)³³ գաղտնագրված տարածաժամանակային ցուցիչներ են: «Օձից հ'ելած տղան»՝ Միրգա Մահմուտը, կնոջն ասում է, որ իր մոտ երեք հատ հրեղեն ձիու մազ ունի՝ ճերմակ, կարմիր, սև. «Օրական մեկ մազը կրակ կտամ մեկ ձի կուգա ես կը հեծնիմ, կը հ'ընկնիմ ջիրինդ խաղացողների մեջ, բաճանաղներիս լավ կը ծեծեմ ու ձին կը քշեմ կերթամ, դուրը բաց կը թողնիմ... դու ձեն մի հանե, չըլլիմ չիմանամ որ ասես. «Էն լավ ձիավորը Միրգա Մահմուտն է»: Խախտելով պայմանը թագավորի աղջիկը քույրերի մոտ հպարտանում է, որ «ջիրինդ խաղացող» հրեղեն սև ձիավորն իր ամուսինն է: Ծիսարգելքը խախտվելուն պես Միրգա Մահմուտն իր սև հրեղեն ձիով դառնում է սև ամպ ու երկնքի երեսից անհայտանում:

«Միրգա Մահմուտի հեքիաթում» թագավորի աղջիկը հագավ «երկթե հ'ոտնմները», «երկթե բիրը» ձեռն առավ (տարբերակներում՝ պողպատե գավազան, պողպատե սուլ), «մի ջերն էլ լիք կորեկ լցեց ու թումրին մնաս բարով ըսեց, էկավ կետարի ու կիսրոջ ձեռները պագեց ու հ'ընկավ ճամբա»³⁴: Բուսական աշխարհի

³⁰ ՀԺՀ, հ. IX, էջ 244-252, հ. IV, էջ 19, հ. I, էջ 408, *Քիրակն*, 1899, N 3, էջ 42-45, ԷԱԺ, հ. Բ, էջ 204, ՀԺՀ, հ. I, էջ 413, հ. IV, էջ 113-114, էջ 113:

³¹ ԷԱԺ, հ. Բ, էջ 198-216, հ. Բ, էջ 204-205:

³² ՀԺՀ, հ. IV, էջ 195-219:

³³ Նույն տեղում, հ. IV, էջ 412: Ոչ միայն նվիրագործվող տղան ու աղջիկն են «քոլոզ» (անտեսանելի դարձնող գլխարկ) հագնում անանցանելի ճանապարհը հաղթահարելու համար, այլև ձին (ԷԱԺ, հ. Բ, էջ 209):

³⁴ ՀԺՀ, հ. IV, էջ 205-206, հ. IV, էջ 208, հ. IV, էջ 195-219, հ. XV, Ե., 1998, էջ 332, էջ 208: Երկաթե տրեխների, պողպատե գավազանի՝ իբրև երկարատև դեգերումների առասպելական այլբանության մասին վկայություններ կան և՛ հայ բանավոր ավանդության, և՛ ուշ շրջանի գեղարվեստական գրականության մեջ (*Ղանալանյան Ա.*, Ավանդապատում. Ե., 1969, էջ 3(Բ): «Աշխարհի էն ծերն էլ գնացած ըլիս, միկիտան Մաքո՛, ես երկաթե տրեխներ պտի հագնեմ, երկաթե գավազան ձեռս առնեմ ու քամակիցդ գամ, քո իզը չես կարող կորցնել, իմ ձեռիցը չես պրծնիլ» (*Պոռչյան Պ.*, Երկեր, Ե., 1982, էջ 300):

կենսաբանական փոխակերպումները մարմնավորող մահացած սերմը (կորեկը) վերոհիշյալ բնագրում ընկալվում է իբրև տարածաժամանակային ցուցիչ: Թագավորի աղջիկը կգտնի ամուսնուն երկարատև դեգերումներից հետո միայն, երբ «երկթե հ'ոտումները մաշին, բիրը մաշի, կարճնա, մեկ ձեռք բռնելու տիտ մնա, կորեկն էլ ջեբի մեջ փթի, հող դառնա», քանի որ փորձությունների հաղթահարումը ժամանակ (յոթ³⁵ կամ երեք³⁶ տարի, մեկ օր, յա մեկ շաբաթ, յա մեկ ամիս, յա մեկ տարի, այսինքն՝ անորոշ) ու տարածություն (Պղնձե, Արծրթե, Օսկե քաղաքներ, հողե, շուշեցե, պղնձե, երկաթե, պողպատե, արծաթե, օսկեցե բերդեր³⁷, այսինքն՝ աշխարհի ծայրը)³⁸ է ենթադրում: «Զարգանդ թագավորի աղջիկը»³⁹ (Շիրակ) հեքիաթում «շորի մեջ փաթթած բուռն պուրից» անտառ է աճում՝ խորհրդանշելով ոչ միայն մեռնող ու հառնող բնության փուլային փոխհաջորդականությունը⁴⁰, այլև տարածության մեջ ժամանակի մշտնջենականությունը, որովհետև բնական նշանակությունից զատ, հացահատիկային բույսերն ընկալվում են նաև իբրև մշակութային աշխարհի ծածկագրումներ⁴¹:

Ինչպես Միրզա Մահմուտի կինը, այնպես էլ նույն ճակատագրին արժանացած Հաբրմանի կինը («Հաբրմանի հեքիաթը»-Մանազկերտ) իրենց ամուսիններին վերադարձնելու նպատակով, տարածաժամանակային փորձություններ հաղթահարելով, հասնում են անդրաշխարհ: Լուրը հասնում է Հաբրմանի հորը՝ ոչ հողածինների թագավորին, թե «էն հողածինը, որ էկեր էր, առավ քու տղեն գնաց»: Ոչ միայն տարբեր տարածություններում, այլև ժամանակային տարբեր «միավորներում» ապրող հողածինն ու հրեղենը անհամատեղելի են. «Դու իմ տղի հոգին առար, գնա իմ տղեն քեզնե ազատվի», - ասում է Հաբրմանի հայրը: Ամուսնու կարծիքին համախոս է նաև Հաբրմանի ոչ հողածին մայրը. «Հացթո՛ւխ, ե՛լ բոնա բե, կախա թունդիր թըղ վառի, իմ տղի հոգին ըտորնե ազատի»:

Տղան փախչում է հոր հետապնդումներից՝ կնոջը դարձնելով պաղ ու տաք աղբյուր, իրեն ջուր ծախող հալտր, կնոջը՝ վանք, իրեն՝ տիրացու, կնոջը՝ խնձորի շիվ, իրեն՝ օձ և ամբողջովին փաթթվում է շիվին: Տեսնելով, որ անդարձ կորցնում է որդուն, թագավորն ասում է. «Ի՞նչ էնեմ, Հաբրման, քոքին զարկեմ՝ իմն ա, ծերին զարկեմ՝ իմն ա, դու էղնիս քու աստված, ես գինամ, դու կերթաս Հողածրնի էրկիր, քու լեզուն հան, ես պաքիմ, փափագ առնիմ ու գնամ»⁴²: Տղան ընդառաջ չի գնում հոր զգվանքին (թույնը թափում է վերջինիս բերանում և սպանում), որովհետև

³⁵ ՀԺՀ, հ. IV, էջ 206, էջ 20, հ. XV, էջ 332:

³⁶ **Բիրակն**, 1899, N 3, էջ 42-45:

³⁷ ՀԺՀ, հ. IX, էջ 247, էջ 247-248, հ. IV, էջ 21:

³⁸ **Սրվանձոյանց Գ.**, նշվ. աշխ., էջ 493:

³⁹ ՀԺՀ, հ. IV, էջ 99-100:

⁴⁰ Ցորենի՝ իբրև տանջված ու տառապած կենդանի ոգու մահվան և հարության առասպելական հավատալիքի մասին տե՛ս **Арутюнян С. Б.**, *Отражение древневосточной жатвенной мифологии в загадке о пшенице* (ՀՄՄՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1969, N 11, էջ 67-77), **Фрезер Дж.**, *Золотая ветвь, М., 1980, с. 362-435*:

⁴¹ **Агапкина Т.**, *Мифология деревьев в традиционной культуре славян: лещина (Corylus avellana)* (*Studia mythologica Lavica, 1, 1998, Pisa, p. 183-194*).

⁴² ՀԺՀ, հ. IX, էջ 244-252, էջ 250, էջ 248, էջ 249, էջ 251:

հետամուսնական խորհրդածեսի փորձությունները հաղթահարող հերոսները կանգնած են մութ ու լույս աշխարհի ընտրության առջև, որն ավելի ճիշտ կլինի մեկնաբանել ոչ թե ծնող-գավակ կենսաֆիզիոլոգիական, այլ հողածին-հրեղեն տարածաժամանակային հարթության վրա⁴³: Պղնձե, Արծրթե, Օսկե քաղաքները (կամ բերդերը) հասնելու դժվարությունները, ոչ դյուրությամբ մաշվող «երկրթե սուլերն ու պողպրտե գավազանը» և հատկապես խորհրդավոր գործությամբ օժտված չախմախաքարը տարածաժամանակային այնպիսի ցուցիչներ են, որոնք ամրություն ու կարծրություն են ենթադրում:

Ոչ միայն նվիրագործվող հերոսն է երկայթե կամ պողպատե «չարոխներ», երկայթե կամ պողպատե գավազան կրում, այլև հերոսին օժանդակող «իրեք հարուր տարեկան Քաշալ Քերքերտան դուշը» («Սըմավոն թագավոր ու Գյուլ»-Այրարատ)⁴⁴ կամ «քանի հազար տարեկան Չեչել-քերքեզ դուշը» (Չարսանճագ)⁴⁵ (տարբերակներում՝ ձի⁴⁶), որի «ոտներ երկայթից ա, թոնելու վախտը տալիս ա իրար, կրակ ա թափում»⁴⁷ (հմմտ. կարծր չախմախաքարի հետ), «որ ընդհարեալ ի պողպատն՝ կայծս արձակե»⁴⁸, իսկ «կրակի պաշտամունքը նախորդում է նրան խորքերում ծածուկ պահողի և հանկարծ որևէ տեղից ծածուկ դուրս հանողի պաշտամունքին»⁴⁹: Հայ բանավոր ավանդության մեջ, մասնավորապես հանելուկներում, առածներում և ավանդություններում վկայություններ կան այդ պատկերացումների մասին⁵⁰: «Սըմավոն թագավոր ու Գյուլ»⁵¹ հեքիաթում «չախմախե» ոտքերով փետրաթափ թռչունի երեքհարյուրամյա տարիքն արդեն իսկ խոսում է ժամանակի մեջ նրա գերակայության, երկայթե ամուր ոտքերը՝ անսահման տարածության հաղթահարելիության, իսկ ոտքերից առկայծող կրակը՝ տեղեկատվության փոխանցման

⁴³ Բացի դրանից, որդին սպանում է հորը, որովհետև հնագույն պատկերացումների համաձայն՝ մահն ու կործանումը պայմանավորված են մեռնողի ծնունդ տված կյանքով, հինը բացառվում է հնից կյանք առած նորից, և, ինչպես նկատում է Հ. Օրբելին, հզոր կաղնու տապալումը կատարվում է այն կացնից, որի կոթը կտրված է կաղնու ճյուղից, կամ թե արծվի մահը հենց արծվի թևի փետուրից պատրաստված նետից է (*Օրբելի Հ.*, Հայկական հերոսական էպոսը. Ե., 1956, էջ 126): Հմմտ. նաև՝ «Շառը գանգատ գնաց աստծո մոտ կացնիցը, որ իրան կըտրում ա, ասեց՝ կոթը քեզանից ա» (*Ղանալանյան Ա.*, Առածանի, Ե., 1960, էջ 226: Այդ պատկերացման արդյունք է նաև իր կապուտայա աղջկա արձակած նետից մեռնող Սասունցի Դավթի բացականությունը. «Էդ իմ սերմն էր, որ ինձ սպանեց» (*Սասնա ծռեր*, հ. Բ, առաջին մաս, Ե., 1944, էջ 91):

⁴⁴ ՀԺՀ, հ. IX, էջ 247-248, հ. IV, էջ 21, հ. I, էջ 408, հ. IV, էջ 20, 206, 412, ԷԱԺ, հ. Բ, էջ 204, հ. III, էջ 80-94:

⁴⁵ ԷԱԺ, հ. Բ, էջ 226:

⁴⁶ «Ձին որ քշում ա, ձիու ոտների տակիցը կրակը թափում ա» (ՀԺՀ, հ. III, էջ 50):

⁴⁷ ՀԺՀ, հ. III, էջ 88:

⁴⁸ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Ե., 1979, հ. 1, էջ 1046:

⁴⁹ *Ալիշան Ա.*, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը. Ե., 2002, էջ 29:

⁵⁰ «Ակռանիս իրար քսեցի, // Կած ու կրակ հանեցի» (*Հարությունյան Ա.*, Հայ ժողովրդական հանելուկներ, էջ 20): Փոքր Մհերը Քաղկիկ գյուղից մինչև Սասնա բերդ ձգվող իր առասպելական ճանապարհը սալարկում էր գայլախազով ու չախմախաքարով, «երբ հողն այլևս չէր դիմանում նրա ոտքերի տակ» (*Ղանալանյան Ա.*, Ավանդապատում, էջ 222):

⁵¹ ՀԺՀ, հ. III, էջ 80-94:

առասպելական այլաբանության մասին: Պակաս ուշագրավ չէ այն հանգամանքը, որ «Գորտ» հեքիաթում տղան չիբուխը լցնում է, իսկ Ջմրութ-դուշը չախմախը զարկելով՝ վառում է այն, և ի նշան երախտագիտության (տղան փրկել էր Ջմրութ-դուշի ձագերին)՝ տղային հասցնում է լույս ու մութ աշխարհի սահմանագիծ՝ կրճատելով անսահման տարածությունն ու ժամանակը և «քոլոզի» շնորհիվ՝ նրան դարձնելով անտեսանելի⁵²: «Սըմավոն թագավոր ու Գյուլ» հեքիաթում «դուշն» ավելի քան պարզ է ձևակերպում տեղեկատվության փոխանցման մեխանիզմը. «Իմ բընբուլը կտամ քեզ, հենց որ նեղ տեղը կընկնես, չախմախի կտա՛ս՝ ես քու կշտին հազիր եմ»⁵³:

Չարսանձագից գրառված «Գորտ» և «Ամպ» հեքիաթներում հերոսն ու թռչունը (կամ ձին) միասին են հաղթահարում խորհրդածեսի փորձությունները և հասնում մութ աշխարհ, ուր ժամանակն ու տարածությունը բացարձակապես չեն ենթարկվում պարբերաշրջանի օրինաչափություններին (վեց ամիս պիր տիրոջից (ամբողջովին) գիշեր է, վեց ամիս պիր տիրոջից ցորեկ)⁵⁴:

Ջորօրինակ մեկ այլ՝ «Պատիկ Միրզան և դև Գորգոչան» հեքիաթում չախմախի բացակայության պատճառով ժամանակի զգացողությունը կորցրած դևահալած պատիկ Միրզան («քար, չախմախ մեկել աղբոր ծոցն է») բարձրանում է սարի գլուխը կրակ բերելու: Նա ժուկ ու ժամանակին հանդիպում է այն պահին, երբ «հալտր նստեր դարի գլուխ, սև թելե կծիկ մը ձեռք. կը կըծկե, սիպտակ թելե ջոջ կծիկ մ'էլ դրեր կուշտ: Կ'երթա մոտ, կը հարցուցե. - էդ, ի՞նչ կծիկներ են. դու ո՞վ ես:

-Որդի, - կ'ասե, - ես ժուկն ու ժամանակն եմ, սև կը կծկեմ՝ գիշեր է, սիպտակ կծկեմ՝ ցերեկ է: Պատիկ Միրզան կը տեսնա, որ հա հա է սև կծիկ կը խլսնի. հասավ իլեց կծիկը հալտրեն, գլորեց դարեն տակ. - Դե՛ նոր կծկե, - ասաց, - թող գիշերն էրկննա, ես շա՛տ բան ունիմ»⁵⁵: Մեկ այլ՝ «Կրակոտ ոսպ» (Չարսանձագ) հեքիաթում տղան հորդորում է լեռան գլխին նստած հալտրին «կծիկը վեար դնել», չկծկել, մինչև ինքը գնա կրակը առնի, գա: Հալտրը ընդդիմանում է. «Չըլլի ր, ա յ որդի, հայվնները, թռչունները, մարդիկը խորթանմիշ կըլլին»⁵⁶:

Ի տարբերություն անդրաշխարհի, ուր «ժուկ ու ժամանակը ցույց է տալիս ժամանակի առասպելական ըմբռնումը»⁵⁷, այսրաշխարհում ժամանակի կամայական փոփոխությունը դատապարտելի է և «հեքիաթային օրենքների» համաձայն՝ պատժի արժանի:

Արևամայրն անիծում է բոլոր նրանց, ովքեր խանգարում են Արեգակի օրվա շրջապտույտը: Կարգազանցները (ովքեր փորձում են նետահարել և երկնքից ցած գցել Արևին⁵⁸ կամ հանդգնում են անարգել նրան [«վեր կացավ և դեպի ինձ (Արևը՝

⁵² ԷԱԺ, հ. Բ, էջ 198-216, 206:

⁵³ ՀԺՀ, հ. III, էջ 80-94 էջ 90, Բմբուլը (=մագ) հնդեվրոպական ավանդույթում հոգու և հմայական ուժի կենտրոնացման տեղն է (Пропи В. Я., նշվ. աշխ., էջ 30):

⁵⁴ ԷԱԺ, հ. Բ, էջ 198-216, էջ 183-197, էջ 194-195, էջ 205:

⁵⁵ **Մրվանձոյանց Գ.**, նշվ. աշխ., էջ 434-444, էջ 437:

⁵⁶ ԷԱԺ, հ. Բ, էջ 219:

⁵⁷ **Արեղյան Մ.**, Երկեր. հ. Է, Ե., 1975, էջ 48:

⁵⁸ **Մրվանձոյանց Գ.**, նշվ. աշխ., էջ 492:

Հ. Թ.) շոեց»⁵⁹], կամ թախանձում են, որ արևը ուշացումով գնա Արևամոր գիրկը մինչև մայրը կամ հարսնացուն հասցնեն գուլպան գործել կամ էլ հարսնուորները հասցնեն անցնել Քափաս լեռան վտանգավոր տեղով) խստագույնս պատժվում են Արևամոր (նաև՝ Արևի) կողմից: Անիծվածները ցերեկը մեռնում են, գիշերը կենդանանում կամ էլ քար են դառնում:

Ասում են, թե մեղանչողների՝ Արևին որոնող երկաթե տրեխներով ու երկաթե գավազանով հարագատները (կինը, մայրը) «մինչև այսօր էլ չեն կարողանում գտնել արևի բնակարանը»⁶⁰:

Ե. Լալայանի գրառած «Արևի հեքիաթում»⁶¹ երկարատև դեգերումներից հետո եղջերուի կոտոշների վրայով Արևամոր պալատը հասած կարգազանցի կինը ներում է հայցում նրանից: Թե՛ այս, թե՛ Գ. Սրվանձտյանցի «Օձեմանուկ, Արևմանուկ» տարբերակում⁶² մայրաստվածության կերպարը խորհրդանշող Արևամայրը խնդրարկուներին փոխանցում է որդու լվացված ջուրը, որպեսզի թվյազերծեն անիծյալին, նրան, ով արևից գուրկ պիտի մնար, պիտի ապրեր և չպիտի ապրեր, «մեռնի ու չի տի մեռնի»: Կիսակենդան անիծյալը ո՛չ մեռած էր, ո՛չ կենդանի: Նա զրկված էր և՛ այսրաշխարհի լուսատու Արևից, և՛ անդրաշխարհում հոգու ճանապարհը լուսավորող կայծքարից, ինչն էլ կարելի է համարել հանդերձյալ կյանքում Արեգակի՝ ծիսապաշտամունքային այլաբանական նմանակումը:

Արևամոր անեծքի գորությունը հայտնի է հայկական ավանդություններից և ամրագրված է AT 433 տիպին պատկանող հայկական վերոհիշյալ հեքիաթներում, որոնց մի մասում կամ Արևամոր անեծքը սպրդել է հեքիաթի դիպաշարից⁶³, կամ անեծքը մթազնվել է շինծու մեկնաբանությամբ (տղան քարաժայռում կիսակենդան պառկած է անողոք ծնողների պատճառով Աստծու կողմից պատժվելու համար⁶⁴ - «Օձ-Մանուկ և Արին-Արմանելին»), այնինչ Գ. Սրվանձտյանցի գրառած տարբերակը⁶⁵ (հակահերոսի կողմից Արեգակի նետահարման հանդուգն փորձը) և Ա. Ղանալանյանի թիվ 1 (Ա) ավանդապատումը⁶⁶ (մայրամուտի հետաձգման թախանձանքը) ամբողջությամբ պահպանել են Արևամոր անեծքի դրդապատճառը, որն արդարացվում է հայ կատարածաբանական առասպելների հնագույն նմուշներով, Արեգակի՝ օրվա շրջապտույտով

⁵⁹ Արևի հեքիաթը. - Հայաստանի պատմության թանգարան (այսուհետև՝ ՀՊԹ), Ե. Լալայանի ֆոնդ 53/46, էջ 468:

⁶⁰ Ղանալանյան Ա., Ավանդապատում, էջ 3(Ա); 59(Գ), 58(Բ), 3(Բ):

⁶¹ ՀՊԹ, Ե. Լալայանի ֆ., 53/46, էջ 467-468:

⁶² Սրվանձտյանց Գ., նշվ. աշխ., էջ 490-495:

⁶³ Պալեան Տ. Վ., Օձամանուկ և Արևմանուկ [Քիրակն, Կ. Պոլիս, 1898, էջ 827-830 (Ակն)], ՀԺՀ, հ. VI, էջ 77-80 (Ղարաբաղ):

⁶⁴ ՀԺՀ, հ. III, էջ 179:

⁶⁵ Սրվանձտյանց Գ., նշվ. աշխ., էջ 492:

⁶⁶ Ղանալանյան Ա., Ավանդապատում, էջ 3(Ա):

պայմանավորված տիեզերական ամբողջությամբ և «դրանց միջոցով աշխարհի կարգուկանոնի ապահովման» մտահոգությամբ⁶⁷:

Հայ ժողովրդական հեքիաթների՝ մեզ հետաքրքրող դիպաշարերի հնարավոր փոփոխակները քննելով զուգադիր բաղդատությամբ, կայուն և փոփոխվող տարրերի բացահայտումներով և ի մի բերելով չախմախաքարին (տեղեկատվական և տարածաժամանակային ցուցիչ) վերաբերող բանահյուսական, ազգագրական, առասպելաբանական, լեզվաբանական և հնագիտական տվյալները՝ հանգում ենք այն եզրակացության, որ հայկական հեքիաթներն ամփոփում են վաղնջական ժամանակներին առնչվող՝ մեր ժողովրդի էթնոմշակութային և ծիսապաշտամունքային մտածողության հնավանդ պատկերացումների վերապրուկները:

ПРОСТРАНСТВЕННО–ВРЕМЕННЫЕ И ИНФОРМАТИВНЫЕ ЭЛЕМЕНТЫ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ

АЙРАПЕТЯН Т. Л.

Резюме

Древнейший человек, наблюдая за небесными светилами, пытался понять их движение и осмыслить время. Процесс осмысления и поиска был выражен также в волшебных сюжетах армянских народных сказок, где время измеряется не реальными единицами, а такими информативными и пространственными кодами, как кремень, волосы, перья птиц, железные или стальные башмаки и трость.

Сравнивая интересующие нас сюжеты в армянских народных сказках, имеющиеся в них постоянные и изменяющиеся элементы, и анализируя фольклорные, этнографические, мифологические, лингвистические и археологические данные, относящиеся к кремню (код информации, пространства и времени), приходим к выводу, что армянские сказки своими корнями восходят к архаическим и культовым обрядам наших предков и содержат в себе следы этнокультурных представлений нашего народа.

⁶⁷ *Հարությունյան Ս.*, Հայ առասպելաբանություն. Բեյրութ, 2000, էջ 446-447: